սկսել էր վերջարանից. սակայն հերոսի կեանքի հետ կապուած պատահարները մանրամասնօրէն բացադրում էին նրա հոգեկան կեանքի յեղաշրջումները և հիասթափումները։ Սանինը, ազնիւ էր, մաքուր և անկեղծ սիրող. նա մոլորուեց, նրան իսկապէս մոլորեցրին իւր կամքին հակառակ. նա դժբախտ էր, պէտք է քաւէր իւր և ուրիշի յանցանքը և պարտաւոր էր ինքն իրեն զրկել բախտից, չարժանանալ նորան, որով պէտք է երջանկանար, բախտաւորուէր։

Ինչո՞ւ չը որոնել Սանինի առաջին բախտը. ինչո՞ւ ընկնել այդ ոչնչութեան, ունայնութեան, մարդկութեան կեանքի անկման՝ վշտերի մէջ տանջուել այդպէս անընդհատ։

հասարակ կեանքի համար խիստ անհրաժեշտ գտնելով ամուսնութիւնը ժամանակին՝ հէնց այդ 22 տ. հասակում։

Օրիորդը, որի մասին վաղուց խօսում էին և որը նոյնպէս լսում էր յաճախ Էմինի մասին, մօտաւոր ոչ մի ծանօթութիւն չունէր Էմինի հետ. աւելին կասենք. նոքա մինչև անգամ չէին տեսել իրար։

Մի օր, ուրիշ շատերից յետոյ օրիորդին առաջարկութիւն է անում Էմինի մօտիկ ազգականը և մերժւում միւսների նման։ Այս տեղի ունեցաւ հէնց այն ժամանակ, երբ Էմինը վերջացրել էր «Գարնանային ջրերը» և պատրաստւում էր գնալ Ե. քաղաքը, ուր ապրում էր օրիորդը։

Թէպէտ, ինչ որ ներքին անյարմարու-

## ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400 ԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆԻ ԱՌԻԹՈՎ



ԱԲԳԱՐ ԴՊԻՐ, տպագրիչ



ՍՈՒԼԹԱՆՇԱՀ, Աբգար դպրի որդին եւ իր նոր գործի շարունակողը

Չէ՞ որ նա էլ Սանինի նման 22 տարեկան է, նրա նման ազնիւ, վեհանձն. փոքրոգի, նախանձոտ չէ. և մի՞թէ միայն Սանինի դուէլն է, որ պէտք է նրա Ջեմմայի նման մէկին խլէ մի անարժանից և տիրանայ ինքը նորան. չէ՞ որ դա կը լինէր դոնքիշոտական նմանութիւն։ Բայց և այնպէս բոլոր արժանիքները բացատրելով հանդերձ պէտք է ունենալ և անձնազոհութեան մի փառահեղ օրինակ—սիրոյ և անկեղծութեան մի անգին առհաւատչեա՝ նրան, որն արդէն հաւանական է, որ մտածում է նրա մասին։ Սանինի մոլորութիւնը, մի՞թէ դա մի լաւ խրատ չէ անփորձ Էմինի համար։

Մինչ այս, մինչ այն ծնողներն ստիպում էին, որ Էմինը հաշտուի ամուսնութեան մտքի հետ, աչքի առաջ ունենալով իրանց համեստ նիւթական ապահովութիւնը և առ-

թիւն էր զգում նա բախտը փորձել այնտեղ, որտեղ խորտակուել էր սիրելի ազգականը, սակայն ինչ որ անորոշ տրամադրութիւն մղում էր նրան շարունակել այն, ինչ որ սկսուել էր արդէն նորա ներքին աշխարհում, որպէս զի նորից չընկնի այդ անիծեալ ունայնութեան տանջալից մտածումների մէջ։

Ե. քաղաքում նա իջաւ մօտիկ ազգականուհու՝ մօրաքրոջ մօտ։ Առաջին գիշերը, ճանապարհի յոգնածութիւնից յետոյ նա ննջեց և անուրջների մէջ տեսաւ նրան, որին կարծէք պատրաստւում էր սիրել։ Ծնողների ներկայութեամբ և համարեա վերջիններիս կամքին հակառակ օրիորդը մօտեցաւ, ընկաւ Էմինի վզովը. ինչ որ ցնցում և ջերմութիւն, ապա սարսուռ անցաւ երիտասարդի մարմնով, գլխի մազերը դիզա-

Վերկացաւ, որպէս դի շամպայնեան գինու շիշը վերցնէ։ Նա զգաց, որ ոտքերը կարծես փետացել են։

Տարօրինակ բան է, առաջին շշից յետոյ կարծես թէ ոտքերը թուլացան...

Նա ուզեց վեր կենալ, բայց վայր ընկաւ գորգի վրայ և մինչև անգամ չը փորձեց վեր բարձրանալ։ Մի քանի րոպէից յետոյ չափաւոր խռմփոցը ժամացոյցի չխկչխկոցի հետ խառնուեց...

Անախորժ զգացողութիւնը նրան գիտակցութեան բերեց։ Նրան երևաց, որ ինչ-որ գործիքներով սղմում էին նրա կողերը։ Դըժուարութեամբ կիսով չափ բացեց աչքերը, նա տեսաւ երկու ամրակազմ ոստիկանների, որոնք ծանր կօշիկներով հանգիստ քոթակում էին նրան։

ինչպէս անօգնական էր Թէմիսը այս աշխարհի փոքրերի դէմ։

Անտառի մէջ տեղը կանգնած էր գեղեցիկ, շքեղ հագնուած նամիշը և ինչ որ հանելուկային բառեր էր արտասանում.

—Երբ ես թատրոնից տուն վերադարձայ արդէն շատ ուշ էր։ Ես շատ զարմացայ, երբ սեղանատանն ու նախասենեակը լուսաւորուած գտայ։ Նախազգալով որ լաւ բան չէ կլինելու, այն րոպէին բարձրացայ ուղիղ ամուսնուս ննջարանը...

—Ահա նա, պարոն կոմիսար։

—Այո, քթակալնչից պենսնէն աչքերին երկարաւարդ մարդը,—հենց ծանօթ է, կարծեմ դուք մի քանի անգամ դատուել էք այնպէս չէ՞, Պեր Տուրնէ։

—Այո, պարոն կոմիսար։

## ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400 ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ



Մխիթար Աբբա

Վենետիկեան հայ տպարանական գործի զարկ տուողը, հիմնադիր Մխիթարեան միաբանութեան.



Կարապետ վ. Շահնազարեան

Վաղարշապատի հայ վարդապետ, որ առաջին անգամ տպարան բացեց Մանչեստր (Անգլիա) քաղաքում, և հայ մատենագիրները հրատարակեց.

Արագութեամբ գինովութիւնը անցաւ նրանից, ծանրացած վերկացաւ և հետևեց ոստիկաններին։ Բարձրացաւ սանդուխներով և կանգ առաւ սենեակում, որտեղ կային մի քանի մարդ, որոնց մէջ, ի միջի այլոց, կային զինեալ ոստիկաններ, կամաց խօսում էին յայտնի չէ թէ ինչի մասին։

Նրանց դաժան երեսները տեսնելով, բնազդաբար վախեցաւ չը գիտէր ինչից, չը նայած որ խիղճը բոլորովին մաքուր էր, կեանքի դառն փորձերից նա արդէն գիտէր,

—Քանի՞ անգամ։

—Ութը, և բոլորն էլ թափառելու համար։

—Ափսոս, ասաց կոմիսարը, համարեա միշտ սկսում են թափառելով և մարդասպանութեամբ վերջացնում։

Յետոյ, շուռ գալով ներկայ գտնուողների կողմը, յաղթական տոնով աւելացրեց մատով ցոյց տալով սենեակի ներսը.

—Պեր Տուրնէ, տեսէք ձեր ձեռքի գործը։

Ներկայ եղողները ճանապարհ բացեցին, ոստիկանները առաջ հրեցին Պեր Տուրնէին

# ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ



## ՀԱՅՆՐԻԽ ՖԷՕԴՈՐՈՎԻՉ ՄԱԴԷՐ

Գերմանացի ձուլարանատէր Հ. Ֆ. Մադէրը ծն. Թիֆլիսում 1850 թուին, ուսու Գերմանիայում տեխնիքական գիտութիւններ և վերադառնալով՝ 1877 թ. բացեց Թիֆլիսում ձուլարան։ Նա գործի մէջ մըտու իբրև դրամատէր, իսկ արհեստի ղեկավարն էր Կ. Կ. Էյլիցը։

Հայկական տառերի վերածնութեան դործում Հ. Մադէրը մեծ գործ է կատարել և ստեղծել է բազմատեսակ նորութիւններ, որոնց մէջ առանձնապէս աչքի են ընկնում սովորական գրքատառերը կորպուս և ցիցերօ։

Սրա պապը Խրիստիան Մադէրը Թիֆլիս է եկել 1818 թ. և Թիֆլիսում առաջին անգամ նա է բացել բուլքու խանութ, ինչպէս նաև առաջին «դրօշկա» կոչուած կառքն էլ նա է բերել տուել և սովորութիւն դարձրել։



## ԿԱՐԼ ԷՅԼԻՑ

Այժմ մեռած, տառաձուլիչ, որ եկել է Լէյպցիգից Պետերբուրգ, որտեղ նա Գլազունովի յայտնի տպարանումն էր և ունէր սեփական ձուլարան։ 1863 թ. գալով Թիֆլիս գործում էր Ռօտինեանցի և Էնֆիաջեանցի ձուլարաններում, իսկ յետոյ Հ. Մադէրի հետ ձուլարան բանալով սկսեց այնտեղ աշխատել։ 1881 թ. ձուլարանը դարձաւ Մադէրի սեփականութիւն և այնուհետև Էյլիցը գործում էր իբրև վարձած աշխատաւոր։

---

ծայրում իրանուէտ, փարթամ մարմինով և իր հպարտ քայլուածքով։

Գալիս էր, սահում էր կարծես։ Եկաւ և կանգնեց պատշգամբի բաց պատուհաններից մէկի մօտ։

Կանգնեց արձակ, համարձակ և առողջ ու լիքը կուրծքը դէմ տուած կանգնեց, կոկետ ու երանուէտ հայեացք ձգելով իմ կողմը։

Վարանոտ հայեացքս հանդիպեց նորա հայեացքին։

Ժպտաց նա ինձ լի, սիրահար և ընդգըրկող ժպիտով, կարծես համբոյր էր գալիս նորա տարփոտ և կիսաբաց շրթունքներից։

Ժպտացի և ես ուզող և փարուող ժպիտով.

Երբ յանկարծ աչքիս ընկաւ նորա կըրծքին մի խոշոր բացուած վարդ։

Դա իմ վարդն է, ժպտալով, ասացի ինքս ինձ։

Նա նորից երանուէտ հայեացքով, այդ վարկեանին, իջեցրեց իր գեղեցիկ գլուխը և ձախ ձեռքով բռնելով կրծքից, համբուրեց վարդը և ապա հանդարտ և ամօթխած հայեացքով բարձրացնելով գլուխը նորից ժպիտ ձգեց դէպի ինձ, ուժեղ կլանող ժըպիտ և ապա դանդաղ, կեսաթեք հայեացքով դարձրած դէպի իմ կողմը, անցաւ և անյայտացաւ իր սենեակի դռնով։

Ես յուզուած, սիրտս լեփ-լեցուն մտայ սենեակս և երան ի վեր ընկաւ անկողնիս վրայ։

V

Վրայ հասաւ գիշերը, այդ յանցաւոր, մեղեդիներով արբած գիշերը։

Երկնքում հազարաւոր շաղ տուած աստղերը գունատուել էին, դողդողում էին։ Լուսինը ամօթխած դէմքով լողում էր երկըն-